**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«10» հուլիսի 2023 **թվական** N 1716-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Գ.ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 187 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գ.Սունդուկյան փողոց թիվ 187 հասցեի 32,66 (երեսուներկու ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային բնակելի ֆոնդի տունը փաստացի զբաղեցնում է 51,55 (հիսունմեկ ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1089-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին N 51 որոշումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Գյումրի քաղաքի Գ.Սունդուկյան փողոց թիվ 187 հասցեի 32,66 (երեսուներկու ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային բնակելի ֆոնդի տան ու դրա փաստացի զբաղեցրած 51,55 (հիսունմեկ ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ներկայացնել պետական գրանցման, համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:

**2023թիվ Գյումրի համայնք** **Վ. Սամսոնյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«10» հուլիսի 2023 թվական N1415-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Գ.ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 187 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գ.Սունդուկյան փողոց թիվ 187 հասցեի 35,10 (երեսունհինգ ամբողջ տաս հարյուրերրորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային բնակելի ֆոնդի տունը փաստացի զբաղեցնում է 51,08 (հիսունմեկ ամբողջ զերո ութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1089-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին N 51 որոշումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Գյումրի քաղաքի Գ.Սունդուկյան փողոց թիվ 187 հասցեի 35,10 (երեսունհինգ ամբողջ տաս հարյուրերրորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային բնակելի ֆոնդի տան ու դրա փաստացի զբաղեցրած 51,08 (հիսունմեկ ամբողջ զերո ութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ներկայացնել պետական գրանցման, համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:

**2023թիվ Գյումրի համայնք** Х **Վ. Սամսոնյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հուլիսի 2023 **թվականի** N 1714-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՊԱՐՈՒՅՐ ՍՈՒԼԹԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՉԵՐԲԻՆԱՅԻ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերը սահմանելու մասին»» № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Պարույր Սուլթանյանի (ՀՎՀՀ՝ 66962393, գրանցման ամսաթիվ՝ 27.06..2018 թ.) 2023 թվականի հունիսի 28-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունիսի 28-ին 13536-2023 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Պարույր Սուլթանյանին Գյումրի քաղաքի Շչերբինայի 3/1 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Պարույր Սուլթանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

07.07.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հուլիսի 2023 **թվականի** N 1713-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 799-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացիներ Նաիրի Հենրիկի Անտոնյանին և Շողիկ Հակոբի Անտոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Չայկովսկու փողոց N 2/4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 21,82 քառակուսի մետր արտաքին (16,27 քառակուսի մետր ներքին) մակերեսով սպասարկման օբյեկտը օրինական ճանաչելու մասին>> N 799-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 30-ի <<Քաղաքացիներ Նաիրի Հենրիկի Անտոնյանին և Շողիկ Հակոբի Անտոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Չայկովսկու փողոց N 2/4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 21,82 քառակուսի մետր արտաքին (16,27 քառակուսի մետր ներքին) մակերեսով սպասարկման օբյեկտը օրինական ճանաչելու մասին>> N 799-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023YMW3S4 ծածկագիրը>> բառերը և թիվը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2023 թվականի N1712-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 21 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ և ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 21 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ և ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼ ՀԱՅՑԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԵՏևՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Նարեկ Բեգզադյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական,

3) Շուշիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի տեղակալ

4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

5) Լևոն Բաբոեդյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

07.11.2023

X

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2023 **թվականի** N 1711-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 21 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ և ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 21 ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ և ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման վերադաս՝ Սուրեն Ջանոյան – Գյումրու համայնքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի պաշտոնակատար,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Սամվել Ենգոյան – «Գյումրու քաղաքային ճանապարհներ» և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ,

գ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Աշոտ Գալստյան – «Գյումրու քաղաքային ճանապարհներ» և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

2023թ. ք. Գյումրի — Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«07» ____________ 2023 **թվականի** N 1410Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԿԻՍ ԱՊԵՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 105 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 277.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ 439.27 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Սարկիս Ապետի Մկրտչյանին պատկանող (հիմք՝ բնակելի տան տեխնիկական անձնագիր N 4167) Գյումրի քաղաքի Իսահակյան փողոցի N 105 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 277.26 (երկու հարյուր յոթանասունյոթ ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա բնակելի տունը կառուցված է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Սարկիս Ապետի Մկրտչյանը:

Քաղաքացի Սարկիս Ապետի Մկրտչյանի կողմից լիազորված անձ Մովսես Պետրոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինության նկատմամբ Սարկիս Ապետի Մկրտչյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023SHMEBM ծածկագրով տեղեկանքը և քաղաքացի Սարկիս Ապետի Մկրտչյանի կողմից լիազորված անձ Մովսես Պետրոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 25-ին N 7524 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Սարկիս Ապետի Մկրտչյանի (ծնված 1946 թվականի մայիսի 02-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Իսահակյան փողոցի N 105 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 277.26 (երկու հարյուր յոթանասունյոթ ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 439.27 (չորս հարյուր երեսունինն ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սարկիս Ապետի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հոկտեմբերի 2023 **թվականի** N 1709 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՄՎԵԼ ՍԵՄՅՈՆԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ(1/6 ՄԱՍ) ԵՎ ՍԵՐԳԵՅ ՍԵՄՅՈՆԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ(5/6 ՄԱՍ) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՓՈՂՈՑ N 1 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 52.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 121.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Սամվել Սեմյոնի Անտոնյանին(1/6 մաս) և Սերգեյ Սեմյոնի Անտոնյանին(5/6 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Գրիբոյեդովի փողոց N 1 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 121.87 (հարյուր քսանմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 52.87(հիսունհերկու ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Սերգեյ Սեմյոնի Անտոնյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով քաղաքացի Սերգեյ Սեմյոնի Անտոնյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականին N 9041 թվագրմամբ)՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցները կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2022TYCCPE ծածկագրերը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Սամվել Սեմյոնի Անտոնյանի(1/6 մաս) (ծնված 1961 թվականի նոյեմբերի 08-ին) և Սերգեյ Սեմյոնի Անտոնյանի(5/6 մաս) (ծնված 1956 թվականի հունվարի 03-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Գրիբոյեդովի փողոց N 1 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 121.87 (հարյուր քսանմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացիներ Սամվել Սեմյոնի Անտոնյանին(1/6 մաս) և Սերգեյ Սեմյոնի Անտոնյանին(5/6 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Գրիբոյեդովի փողոց N 1 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 52.87(հիսուներկու ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սամվել Սեմյոնի Անտոնյանին և Սերգեյ Սեմյոնի Անտոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» [illegible] 2023 **թվականի** N 1708-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 04-Ի N 872-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 04-ի <<Քաղաքացիներ Արթուր Գրիշայի Մազմանյանին և Սարո Կարլենի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Չայկովսկու փողոց N 2/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 149,43 քառակուսի մետր արտաքին (121,87 քառակուսի մետր ներքին) մակերեսով սպասարկման օբյեկտը օրինական ճանաչելու մասին>> N 872-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 04-ի <<Քաղաքացիներ Արթուր Գրիշայի Մազմանյանին և Սարո Կարլենի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Չայկովսկու փողոց N 2/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 149,43 քառակուսի մետր արտաքին (121,87 քառակուսի մետր ներքին) մակերեսով սպասարկման օբյեկտը օրինական ճանաչելու մասին>> N 872-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023USWLX7 ծածկագիրը>> բառերը և թիվը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«07» «հուլիսի» 2023 թվական N 1707 -Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի հուլիսի 03-ին, ժամը 11:50-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանի (Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Տ.Մեծ պողոտա, 4-րդ շենք, բնակարան 19 անձնագիր՝ AS 0384701 տրված՝ 03.10.2018 թվականին 064-ի կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հունիսի 19-ին կազմված, քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ Ա. Մովսիսյանը և Ֆ. Հովհաննիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի հունիսի 19-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և

255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմվել են քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի հունիսի 19-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանի կողմից, Գյումրի քաղաքի, Տ.Մեծ պողոտայի թիվ 4/2 հասցեում, առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, այսինքն՝ Կարեն Համլետի Աբրահամյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովվել է փոստային ծառայության միջոցով, առկա է ծանուցագիրը ստանալու փաստը հավաստող թիվ AL0110047422AM անդորրագիրը:

Քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի հունիսի 19-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ ամբողջովին ընդունում է այն փաստը, որ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի, Տ.Մեծ պողոտայի 4/2 հասցեում, առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, սակայն նշեց, որ ինքնակամ շինարարական աշխատանքները կատարվել են դեռևս 2015 թվականին, ինչպես նաև նշեց, որ պատրաստակամ է երկամսյա ժամկետում իր միջոցների հաշվին վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:

Օրենսգրքի 33-հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:

Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման)

մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

Ի նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 37-րդ և 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, 37-րդ, 247-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2-րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի բ ենթակետով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանին սույն որոշումը ստանալուց հետո երկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյնին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Կարեն Համլետի Աբրահամյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

07.07.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<07>> հուլիսի 2023 թվականի N 1706 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԼԻԹ ԱՐԱԳԱԾԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163–րդ հոդվածով և հիմք ընդունելով Լիլիթ Արագածի Թովմասյանի 2023 թվականի հուլիսի 3-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի հուլիսի 10-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2023 թվականի հուլիսի 10-ից 21-ը ներառյալ:
3.Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Լիլիթ Արագածի Թովմասյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Էդգար Գագիկի Մարտիրոսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Արագածի Թովմասյանին և Էդգար Գագիկի Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հուլիսի 2023 **թվականի** N 1705-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21 -Ի N 1525-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Արման Ասատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի օգոստոսի 18-ին N 14564 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի հունիսի 21-ի Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի «Անհատ ձեռներեց Արման Ասատրյանին հասարակական տրանսպորտի ժամանակավոր հսկիչ սպասարկման կետ տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Պ.Սևակի փող. N 18/4 հասցեի 10,5 քառ.մ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1525-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2013 թվականի հուլիսի 2-ի - (գրանցված գրանցամատյանում N 4559) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 11032014-08-0026 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2023 թվականի № 1704-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՈՒՌԵՆՈՒ ՁՈՐ 3 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №0104218) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Գյումրիֆիշ» ՍՊԸ-ի տնօրեն Հմայակ Գևորգյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 14010 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ուռենու Ձոր 3 հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №0104218) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑ, 36 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» հուլիսի 2023 **թվականի** N1403-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14 -Ի N 1560-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Ալեքսեյ Նալբանդյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 17-ին N 6788 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի հունիսի 17-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Ալեքսեյ Նալբանդյանին ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով Գյումրու համայնքին պատկանող Վ.Սարգսյան փողոց N 2/2 հասցեի 8,16 քառ.մ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1560-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2012 թվականի օգոստոսի 01-ի (գրանցված սեղանամատյանում N 8719) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 20082012-08-0229 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալեքսեյ Նալբանդյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.07.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» նոյեմբերի 2023 **թվականի** N 1702-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17 -Ի N 1453-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Արման Ասատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 04-ին N 8258 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի հունիսի 17-ի Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի «Անհատ ձեռներեց Արման Ասատրյանին հասարակական տրանսպորտի ժամանակավոր հսկիչ սպասարկման կետ տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Ս.Գրիգորյան փողոց N 1/3 հասցեի 10,5 քառ.մ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1453-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2013 թվականի հունիսի 24-ի (գրանցված գրանցամատյանում N 4338) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 11032014-08-0047 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«06» նոյեմբեր 2023 **թվականի** N 1701-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի N 753 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Գևորգ Սիմոնյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 14-ին N 6657 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2001 թվականի դեկտեմբերի 03-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ.Մկրտիչ Չաքմիշյանին սեփականության իրավունքով պատկանող, Շահումյան և Թումանյան փողոցների խաչմերուկի արևելյան կողմում գտնվող, մետաղական տաղավարի փաստացի զբաղեցրած 22,76քառ.մ. մակերեսով հողամասը վարձակալության հանձնելու մասին» N 753 որոշումը:
2. Լուծել 2002 թվականի օգոստոսի 05-ի (գրանցված սեղանամատյանում N 2-3265) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ 2002 թվականի օգոստոսի 27-ի N 429140 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Սիմոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2023 **թվականի** N 1700-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17 -Ի N 1450-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Արման Ասատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 04-ին N 8266 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի հունիսի 17-ի Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի «Անհատ ձեռներեց Արման Ասատրյանին հասարակական տրանսպորտի ժամանակավոր հսկիչ սպասարկման կետ տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Ղարսի խճուղի N 6/2 հասցեի 10,5 քառ.մ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1450-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2013 թվականի հունիսի 24-ի (գրանցված գրանցամատյանում N 4337) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 11032014-08-0036 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** x **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«06» հուլիսի 2023 **թվականի** N 1699-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17 -Ի N 1452-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Արման Ասատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 04-ին N 8270 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2013 թվականի հունիսի 17-ի Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի «Անհատ ձեռներեց Արման Ասատրյանին հասարակական տրանսպորտի ժամանակավոր հսկիչ սպասարկման կետ տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Արևելյան փողոց N 8/4 հասցեի 10,5 քառ.մ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1452-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2013 թվականի հունիսի 24-ի (գրանցված գրանցամատյանում N 4336) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 11032014-08-0035 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արման Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«06» հուլիսի 2023 **թվականի** N 1698-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 1077-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարման աճուրդային հանձնաժողով ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին» N 1077-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) 3-րդ և 5-րդ ենթակետերում «ճարտարապետության» բառը փոխարինել «հողօգտագործման» բառով,
   2) 6-րդ ենթակետի «պարտականություններ կատարող» բառերը փոխարինել «ժամանակավոր պաշտոնակատար» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից:

06.07.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«06» նոյեմբերի 2023 թվականի №1697-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ, ՀԱՑԻԿԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 876.96 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0501-0003) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի, Հացիկի խճուղու հարևանությամբ գտնվող 876.96 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0501-0003) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՀԱՑԻԿԻ ԽՃՈՒՂԻ, 6/5 ՀՈՂԱՄԱՍ**

06.07.2021

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<_06_>>_հուլիսի_ 2023 թվականի N 1696-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ԱՐԱՄ ՄԱՐՏՈՒՆԻԿԻ ՇԱԲՈՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի գրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի օգնական Արամ Մարտունիկի Շաբոյանին գործուղել Իրանի Իսլամական Հանրապետության Յազդ քաղաք՝ << Պատմական Յազդ քաղաքը>> ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում գրանցելու տարելիցին նվիրված միջոցառմանը մասնակցելու նպատակով:
2.Գործուղման ժամկետը 4 (չորս) օր՝ 2023 թվականի հուլիսի 7-ից 10-ը ներառյալ:
3.Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Մարտունիկի Շաբոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«06» հուլիսի 2023 թվականի N 1695-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԴՄԻՆԹՈՆԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բադմինթոնի գավաթի 2023 թվականի հուլիսի 11-15-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բադմինթոնի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի հուլիսի 6-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության բադմինթոնի գավաթի առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի հուլիսի 11-15-ը քաղաք Երևան գործուղել թվով 8 մարզիկի և 2 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
------------------------------ N ------------- որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Բադմինթոնի գավաթի առաջնության **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

1.Խաչատրյան Հովնան – մարզիկ:
2. Աբրեյան Արման – մարզիկ:
3.Սարգսյան Ռուդիկ – մարզիկ:
4. Աբրեյան Արման – մարզիկ:
5. Դոխոյան Մանե– մարզիկ:
6. Դոխոյան Լիլիթ – մարզիկ:
7. Խնկոյան Հեղինե– մարզիկ:
8. Արտաշեսյան Տաթև – մարզիկ:
9. Վարդանյան Սարգիս – մարզիչ:
10. Պետրոսյան Հմայակ – մարզիչ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«06» հուլիսի 2023 թվական N 1694-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻՄԻՐՅԱԶԵՎ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Տիմիրյազև փողոց թիվ 32 հասցեի 86.06 (ութսունվեց ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային բնակելի ֆոնդի տունը փաստացի զբաղեցնում է 108.93 (մեկ հարյուր ութ ամբողջ իննսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1089-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին N 51 որոշումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գյումրի քաղաքի Տիմիրյազև փողոց թիվ 32 հասցեի 86.06 (ութսունվեց ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի ֆոնդի տան ու դրա փաստացի զբաղեցրած 108.93 (մեկ հարյուր ութ ամբողջ իննսուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ներկայացնել պետական գրանցման, համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:

X [signature]

2023թիվ Գյումրի համայնք Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«04» հուլիսի 2023 **թվականի** N 1693-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության Ծամբարակ համայնքում կազմակերպվող բռնցքամարտի պատանիների և դեռահասների 2023 թվականի հուլիսի 5–7–ը կայանալիք բաց առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բռնցքամարտի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի հուլիսի 3-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Ծամբարակ համայնքում կազմակերպվող բռնցքամարտի պատանիների և դեռահասների բաց առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի հուլիսի 5–7–ը գործուղել թվով 18 մարզիկի և 2 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
______________ N 1693-Ա որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ծամբարակ համայնքում կազմակերպվող բռնցքամարտի պատանիների և դեռահասների բաց առաջնության **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

1. Նազարյան Յուրա – մարզիկ,
2. Նանիջանյան Սամվել – մարզիկ,
3. Գասպարյան Արայիկ – մարզիկ,
4. Թումասյան Աշոտ – մարզիկ,
5. Գրիգորյան Գագիկ – մարզիկ,
6. Առուշանյան Ղարիբ – մարզիկ,
7. Բաղդասարյան Նարեկ – մարզիկ,
8. Գյուլաշյան Արմեն – մարզիկ,
9. Հարությունյան Արթուր – մարզիկ,
10. Ավետիկյան Արթուր – մարզիկ,
11. Խաչատրյան Գոռ – մարզիկ,
12. Մնոյան Կարո – մարզիկ,
13. Վարդանյան Վահե – մարզիկ,
14. Սեմերջյան Էրիկ – մարզիկ,
15. Ջանիկյան Դավիթ – մարզիկ,
16. Մխիթարյան Վահան – մարզիկ,
17. Մխոյան Հենրիկ – մարզիկ,
18. Ղուկասյան Կամո – մարզիկ,
19. Պողոսյան Գառնիկ – մարզիչ,
20. Խզեյան Հովհաննես – մարզիչ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիսի 2023 թվականի № 1692Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 2753.39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0119-0005) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղու հարևանությամբ գտնվող 2753.39 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0119-0005) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ, 2/2 ՀՈՂԱՄԱՍ**

04.07.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիսի 2023 թվականի №1691-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 6394.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0119-0013) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղու հարևանությամբ գտնվող 6394.12 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0119-0013) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ, 2/3 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«04» նոյեմբերի 2023 թվականի №1690-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ, 7/4 ՆԿՈՒՂ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 2625183) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Թովմաս Վարժապետյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №13479 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Սայաթ-Նովայի փողոց, 7/4 նկուղ հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2625183) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ, 7 ՇԵՆՔ, 4/2 ՆԿՈՒՂ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2023 թվականի № 1629-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 3579.35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0119-0013) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղու հարևանությամբ գտնվող 3579.35 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0119-0013) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ, 4/1 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2023 թվականի №1682Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 24Բ/1 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2511610) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Քնարիկ Աղամյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №13527 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Վ. Սարգսյան փողոց, 24բ/1 հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2511610) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 16 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2023 թվականի № 1687-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ, 7 ՇԵՆՔ ՏԱՐԱԾՔ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2403468) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Շուշանիկ Մկրտչյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №13669 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Գ. Նժդեհի փողոց, 7 շենք տարածք հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2403468) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ, 7 ՇԵՆՔ, 5/1 ՏԱՐԱԾՔ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբ 2023 թվականի № 1686-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 39.15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարևանությամբ գտնվող 39.15 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0167-0023) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 5/11 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2023 թվականի №1685Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ ԹԱՂԱՄԱՍ, 125 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ 57.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 57.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 26-ի №1601–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Կազաչի պոստ թաղամաս, 125 հասցեի բնակելի տանը կից գտնվող 57.06 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 57.06 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններին տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ ԹԱՂԱՄԱՍ, 125/1 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» [illegible] 2023 թվականի №1684-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 772.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0460-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոցի հարևանությամբ գտնվող 772.5 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0460-0001) համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Խ. ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ, 14/10 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2023 թվականի № 1633-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ, 7Ա ՇԵՆՔ, 1, 3-ՐԴ ՀԱՐԿ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2645048) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Շուշանիկ Մկրտչյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №13666 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Գ. Նժդեհի փողոց, 7ա շենք, 1, 3-րդ հարկ հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2645048) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ, 7Ա ՇԵՆՔ, 1/1 ԲՆԱԿԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    X [signature]    Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2023 թվականի № 1682-Ա

### ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԹԵԼՄԱՆԻ ՓՈՂՈՑ, 4 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արման Ավետիսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №13667 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ժառանգության իրավունքով քաղաքացի Արման Ավետիսյանին պատկանող Գյումրի քաղաք, Թելմանի փողոց, 4 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Է. ԹԵԼՄԱՆԻ ՓՈՂՈՑ, 4/1 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2023 թվականի №1681-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 5626.25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0119-0005) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղու հարևանությամբ գտնվող 5626.25 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0119-0005) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ, 2/1 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2023 թվականի № 1680Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 34/1 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №12112020-08-0006) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մելսիդա Սողոմոնյանի լիազորված անձ Գյուլվարդ Մարդոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №13497 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Սոս Մինասյան Մամիկոնի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի, շինությունների բաժանման սխեմաները և հատակագծերը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 65.08 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
   **ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ, 82/3 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ**
2. 33.72 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
   **ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑ, 82/4 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» հուլիսի 2023 **թվականի** N 1679-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 44.32 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 44.32 քառակուսի մետր արտաքին 34.85 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 76-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խանջյան փողոցի հարևանությամբ 44.32 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 44.32 քառակուսի մետր արտաքին 34.85 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 76-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) նախաբանում «կետի» բառից հետո լրացնել «և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը՝ N 2023G5LPA7» թիվը և բառերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2023 թվականի N 1678-Ա

## ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 1294.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (1192.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ին օգտագործման տրամադրված Գյումրի քաղաքի Շիրակ Օդանավակայան հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 1294.2(մեկ հազար երկու հարյուր իննսունչորս ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր արտաքին (1192.9(մեկ հազար մեկ հարյուր իննսուներկու ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական շինություններ:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառույցը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հունվարի 20-ին N 1202 թվագրմամբ ) հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023B2HYHB ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ին օգտագործման իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակ Օդանավակայան հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 1294.2(մեկ հազար երկու հարյուր իննսունչորս ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր արտաքին (1192.9(մեկ հազար մեկ հարյուր իննսուներկու ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 3680704 /երեք միլիոն վեց հարյուր ութսուն հազար յոթ հարյուր չորս/ Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի